ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն՝ դասվար

Թեմա՝ Սովորողների անհատական ուսումնական կարիքների ուսումնասիրման հայտորոշիչ մեթոդները մայրենիի դասընթացում

Կատարող՝ Անանյան Գայանե Մանվելի

Ղեկավար՝ Ջ.Հ. Գյուլամիրյան
(մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր)

ԵՐԵՎԱՆ 2022

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն _____3

Սովորողների անհատական ուսումնական կարիքների ուսումնասիրման հայտորոշիչ մեթոդները մայրենիի դասընթացում _____5

Եզրակացություն_____11

Գրականության ցանկ _____12

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր դիդակտիկ համակարգ կյանքի է կոչում ուսուցման նորտեխնոլոգիա: Այդ տեխնոլոգիաների կիրառումը պայմանավորվում է նրանով, որ մանկավարժները չեն ցանկանում հրաժարվել այն օգտակարից, ինչին հասել է ուսուցման տեսությունը ու պրակտիկան իր զարգացման նախորդ աստիճաններում՝ պահպանելով նոր գաղափարներ ընկալելու ունակությունը:

Մայրենի լեզվի տարրական դասընթացն իրականացվում է երկու փուլովէ լեզվական նախագիտելիքների ուսուցում և լեզվական տարրական գիտելիքների ուսուցում: Լեզվական նախագիտելիքների ուսուցման փուլում դիտարկվում են այն հասկացությունների ուսուցումը և ունակությունների ձևավորումը, որոնք անհրաժեշտ են երեխաների խոսքի և մտածողության զարգացման, հասկանալով կարդալու և գրելու տարրական կարողությունների ձեռքբերման, լեզվամտածողության ձևավորման գործընթացում:

Ընտրելով սովորողների անհատական կարիքների գնահատման ճիշտ մեթոդներ՝ ուսուցիչը նշված փուլում կարող է ուղղել նախադպրոցական տարիքին հատուկ և վաղ կրտսեր դպրոցական տարիքում դեռևս պահպանված խոսքային արատները, ընդարձակել և զարգացնել սովորողների խոսքային գործունեության հիմքերը, լեզվամտածողությունը: Սովորողների կարիքների ճիշտ ուրվագծման դեպքում հստակորեն ձևավորվում է սեր մայրենի լեզվի նկատմամբ, աշակերտի հաղորդակցական ունակությունների զարգացում:

«Մայրենիի» դասընթացում աշխատանք է տարվում երեխաների բառապաշարի հարստացման և ակտիվացման, այն օտարաբանությունից, ժարգոններից և բարբառային բառերից մաքրելու ուղղությամբ: Երեխաները սովորում են ճիշտ կառուցել և խոսքում օգտագործել նախ՝ պարզ, ապա պարզ ընդարձակ նախադասություններ, ձևավորվում են բանավոր և գրավոր կապակցված խոսք կառուցելու տարրական կարողություններ, որոնք հող են նախապատրաստում լեզվական տարրական գիտելիքների յուրացման համար: Ուսուցման այս փուլում երեխաները նաև ձեռք են բերում նախնական գիտելիքներ պատության (որպես խոսքի ամենամեծ միավոր), նախադասության, բառի, վանկի, հնչյուն-տառի, ձայնավոր, բաղաձայնի մասին, սովորում են ճիշտ օգտագործել վերջակետը՝ նախադասության վերջում, մեծատառը՝ նախադասության, մարդկանց, քաղաքների անունների սկզբում, գործնականորեն ճանաչում, անվանում և գործածում են կետադրության և առոգանության հիմնական նշանները և այլն: Տարբերում են առարկա, գործողություն և հատկանիշ ցույց տվող բառերը, կարողանում են առարկաները խմբավորել ըստ ընդհանրացնող անունների: Գործնականորեն տիրապետում են պարզ ուղղագրություն ունեցող այն բառերի գրությանը, որոնց նրանք հանդիպում են իրենց ընթերցած նյութերում: Ուսուցիչները, քաջ գիտակցելով սովորողների ուսումնական կարիքները, լեզվական նախնական գիտելիքների ձեռքբերման գործընթացում երեխաներին չպիտի սովորեցնեն քերականական կանոնները և սահմանումներ: Լեզվական տարրական գիտելիքների ուսուցման փուլում իրականացվում է այն պարզ ու մատչելի լեզվական հասկացությունների յուրացումը, որոնք անհրաժեշտ են երեխաներին՝ բանավոր և գրավոր գրագետ խոսք կառուցելու կարողության ձևավորման, լեզվամտածողության զարգացման համար: Ուսուցման այս փուլում լեզվական հասկացությունները չեն ուսումնասիրվում գիտական-լեզվաբանական համակարգով. դրանք ուսումնասիրվում են՝ հիմք ընդունելով ուսուցման՝ պարզից դեպի բարդը, ծանոթից անծանոթը, դյուրինից՝ դժվարը տանող սկզբունքները՝ սակայն գիտականորեն ճիշտ, բայց մատչելի մեկնաբանություններով:

Այսպիսով՝ մեր *ուսումնասիրության թեման* սովորողների անհատական ուսումնական կարիքների ուսումնասիրման հայտորոշիչ մեթոդներն են «Մայրենիի» դասընթացում: **Թեման**

***արդիական նշանակություն*** ունի, քանի որ ժամանակակից կրթական համակարգում տեղի ունեցող արմատական փոփոխությունները ուսուցման և դաստիարակության գործընթացում որպես առաջատար հիմնախնդիր առաջ են քաշում նոր տեխնոլոգիաների պգտագործման անառարկելի պահանջ: Այդ *նպատակով* ուսումնասիրել ենք այն մեթոդները, որոնք կարևոր դերակատարում ունեն սովորողների ուսումնական կարիքների գնահատման հարցում: Դրանց անհրաժեշտությունն առաջին հերթին պայմանավորված է կրթության գործընթացի նպատակների և խնդիրների փոփոխությամբ, այդ գործընթացում սովորողների գրաված դերի կարևորմամբ, նրանց ակտիվության և գիտակցականության բարձրացմամբ: Վերջին տասնամյակում Հայաստանի Հանրապետությունում այս կապակցությամբ գործում են բազմաթիվ կրթական ծրագրեր, որոնք չբացառելով դասական մանկավարժության մեջ և մեթոդիկայում ընդունված ավանդական սկզբունքներն ու մեթոդները՝ փորձում են կրթական համակարգում կարևորել աշակերտներին՝ ուսուցման գործընթացի օբյեկտից նրանց վերածելով սուբյեկտի, ուսուցչին գիտելիքների միակ աղբյուրից վերածելով աշակերտի գործընկերոջ, օգնականի՝ իրականացնելով անձնակողմնորոշիչ կրթադաստիարակչական գործընթաց:

**Աշխատանքի նպատակն է** ուսումնասիրել սովորողների անհատական ուսումնական կարիքների ուսումնասիրման հայտորոշիչ մեթոդները մայրենիի դասընթացքում:

Ելնելով թեմայի նպատակից առաջ ենք քաշում մի շարք **խնդիրներ.**

1.ՈՒսումնասիրել սովորողների անհատական ուսումնական կարիքները,

2.Վեր հանել անհատական ուսումնական կարիքների ուսումնասիրման մեթոդները,

3.Վերլուծել դրանց կարևորությունը ժամանակակից ուսումնական գործընթացում:

# ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

Սովորողների անհատական ուսումնական կարիքների ուսումնասիրումը գիտելիքի ամրագրման համապատասխան եղանակ է, երբ ուսուցիչը ճիշտ մոտեցում դրսևորում սովորողի ընկալման եղանակին: Սովորողների ուսումնառության, առարկայական ծրագրերի և պլանների, չափորոշիչների, ինչպես նաև կրթական քաղաքականության մասին որոշումներ կայացնելիս ուսումնական կարիքների գնահատումը սահմանվում է որպես տեղեկատվության ձեռքբերման գործընթաց: Սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների և նրանց մոտ ձևավորվող արժեքային համակարգի բարելավման նպատակով որոշումներ կայացնելիս հաշվի են առնվում ուսուցման կազմակերպումը, ուղղորդումը և խորհրդատվությունը, կրթական հնարավորությունների բացահայտումը, սովորողների ձեռքբերումների և իմացության աստիճանի ամրագրումն ու վկայագրումը: Ուսումնական կարիքների համար տեղեկատվական աղբյուր են գրավոր թեստերի արդյունքները, տնային առաջադրանքի կատարման մակարդակը, լաբորատոր և այլ գործնական, հետազոտական բնույթի գրավոր աշխատանքները, նախագծերը, բանավոր հարցումները, կիսամյակային միավորային աշխատանքները և այլն:

Հանրակրթության բովանդակությանը ներկայացվող պահանջների, ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթության որակի բարելավման ու վերահսկման մոտեցումների և մեթոդների հիման վրա սովորողների անհատակա կարիքների ուսումնասիրմամբ պետք է.

1)բացահայտել սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության ընթացքը, արձանագրել և վերլուծել նրա ուսումնական ձեռքբերումներն ու դժվարությունները,

2)շարունակաբար և ըստ փուլերի ստուգել ու գնահատել սովորողի կողմից Հանրակրթության պետական չափորոշիչով ամրագրված բովանդակային բաղադրիչների յուրացման և տիրապետման աստիճանը,

3)գնահատման տարբեր ձևերի և տեսակների համակարգված կիրառման միջոցով հնարավորություն տալ սովորողին առավելագույնս ցուցաբերել իր գիտելիքները,

4)գնահատման չափանիշների հստակեցմամբ բարձրացնել ուսուցման գործընթացի արդյունավետությունը,

5)ուսուցանող գնահատման կանոնակարգմամբ խթանել սովորողի հետաքրքրությունը դասավանդվող ուսումնական առարկայի նկատմամբ և բարձրացնել ուսումնառության արդյունավետությունը,

6)նպաստել սովորողի անձնային որակների ձևավորմանն ու վարքագծի կարգավորմանը, խթանել սովորողի ինքնաճանաչման, ինքնազարգացման և ինքնագնահատման կարողությունների զարգացումը,

7)ճշտգրել յուրաքանչյուր սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդալությունն ու ծավալը, խթանել նրա ուսումնական ակտիվությունը,

8)հայտորոշել ուսուցման ընթացքն ու արդյունքները,

9)շաղկապել ուսուցումն ուսումնառության հետ,

10)ապահովել փոխադարձ կապ սովորողի, նրա ծնողի հետ,

11)հաշվառել մեկնարկային վիճակի նկատմամբ սովորողի առաջադիմության ընթացքը,

12)վերահսկել ուսումնական գործընթացն ու արդյունքները և այլն:

Սովորողների անհատական կարիքների ուսումնասիրմանը նպաստում են հատկապես աշակերտակենտրոն մեթոդներն ու տեխնոլոգիաները: Ուսուցիչը մանկավարժական որևէ

տեխնոլոգիա կամ մեթոդ ընտրելիս նախ և առաջ պետք է հաշվի առնի իր աշակերտների առանձնահատկությունները, հետաքրքրությունների շրջանակը, ունակությունների մակարդակը: Մանկավարժական տեխնոլոգիաները միտվաշ են ոչ թե բարդացնել ուսուցման գործընթացը, այլ՝ առավել դյուրին դարձնել այն: Ինչպես նաև ուսուցիչը այդ մեթոդներն ու տեխնոլոգիաները կիրառելիս պետք է հաշվի առնի, որ իր աշակերտների թվում կան այնպիսիները, որոնք ունեն այս կամ այն խնդիրները և պետք է այնպես հարմարեցնի այդ ամենը, որ արդյունքում բոլոր աշակերտների համար օգտակար լինի իր կողմից կիրառված մեթոդը կամ տեխնոլոգիան:

Սովորողների կրթական կարիքների բացահայտման առումով առանձնանում են համագործակցային ուսուցման մեթոդները: Համագործակցային մանկավարժական տեխնոլոգիան իմաստավորվում է համատեղ գործունեության և կոլեկտիվ հաղորդակցման հիման վրա կազմակերպված ուսուցում: Այդպիսի հաղորդակցման ձևեր կարող են լինել կազմակերպված երկխոսությունը, զուգորդված երկխոսությունը, աշակերտների զույգերով կամ ավելի մեծ խմբով կազմակերպված աշխատանքը: Նշված մեթոդիկայի կիրառումը ուսուցչին հնարավորություն է տալիս լավագույնս գնահատելու աշակերտի ուսումնական կարիքների դաշտը: Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար:

Այս դեպքում ուսուցիչը խմբի շրջանակներում գնահատական է տալիս աշակերտի ուսումնական կարիքներին, և ըստ այդմ՝ իրականացնում ուսումնական գործընթացը:

Այս տեխնոլոգիայի համար հիմք են հանդիսացել ամերիկացի հոգեբան և մանկավարժ Ջոն Դյուիի, ռուս հոգեբան Լև Վիգոտսկու և շվեյցարացի հոգեբան Ժան Պիաժեյի աշխատությունները:

Համագործակցային մանկավարժական տեխնոլոգիայի կիրառումը կարելի է պայմանականորեն բաժանել 3 հիմնական փուլերի

1.ուսումնական նյութի նախապատրաստում

2.աշակերտների նախապատրաստում համատեղ աշխատանքին

3.բուն ուսումնական աշխատանքի ընթացքը

Սա այն տեխնոլոգիաներից է, որի ներդրումը կրթության կարևոր պայման է հանդիսանում: Քանի որ կրթության ամբողջ նպատակը կրթության երեխաների ներգրավելն է ուսուցման գործընթացին և բացի այդ ինտեգրելը կոլեկտիվում՝ առանց որևէ խտրականության: Իսկ այս տեխնոլոգիան հենց ինքը մի միջոց է ոչ միայն այս նպատակը իրականացնելու, այլև սովորողների կրթական կարիքների բացահայտման առումով:

Սա կնպաստի նրան, որ ուսուցիչը, գնահատելով սովորողների ուսումնական հնարավորությունները և կարիքները, թույլ կարողություններով երեխայի համար առավել բարձր կարողություններով աշակերտի հետ համագործակցելու հնարավորություն ստեղծի և աջակցություն կստանա վերջինիս կողմից: Հայտնի է, որ խմբակային կամ զույգերով աշխատանքը ավելի է մտերմացնում աշակերտներին, այսինքն՝ դա նպաստում է, որ կրթության երեխաները իրենց զգան կոլեկտիվի մի մաս և այնտեղ ունենան իրենց ուրույն դերը: Այս ամենը առավել լավ պատկերացնելու համար տեսնենք, թե իրականում այս տեխնոլոգիան ինչպես է կիրառվում ուսուցման գործընթացում:

Հայտորոշիչ նշված մեթոդի կիրառման բուն ուսումնական աշխատանքի կատարման փուլում կարող է կազմակերպել.

- Փոխադարձ ուսուցում ուսուցիչ-աշակերտ դերային խաղի տեսքով,

- Զույգերով մտքերի փոխանակման, լրացուցիչ տեղեկատվության կազմակերպելու միջոցով:

Սովորողների կարիքների տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է.

- Ուսոցման արդյունավետության բարձրացմանը՝ ավելի լավ է յուրացվում և մտապահվում ուսումնական նյութը,
- Տրամաբանական մտածողության զարգացմանը,
- Խթանում է ուսման բարձր ճանաչողական դրդապատճառների ձևավորմանը,
- Սովորրողների ուսումնական կարիքները ոչ ճշգրիտ ճշգրիտ ձևով ընկալելուն:

Սովորողների ուսումնական կարիքների ուսումնասիրման ու գնահատման մեթոդների շարքում է ծրագրավորված ուսուցման տեխնոլոգիան: «Մայրենիի» դասընթացում նշված տեխնոլոգիայի իմաստը պայմանավորված է նրանով, որ ապահովում է հետադարձ կապ ուսուցման ողջ գործընթացում, ինչը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու սովորողի ուսումնական կարիքների մասին: Դրա համար ուսուցման նյութը բաժանվում է ոչ շատ մեծ, սակայն տրամաբանական ամբողջություն կազմող մի քանի մասերի, որոնք անվանում են ուսուցման քայլեր: Այսպիսով՝ ուսումնական նյութը սովորողին ներկայացվում է հատված առ հատված:

Ուսումնական ամեն քայլ, որն իր մեջ ամփոփում է ավարտուն ինֆորմացիոն հատված, ներկայացվում է սովորողներին ինքնուրույն ուսումնասիրելու համար: Հատվածը ուսումնասիրելուց հետո տրվում ՝ այդ հատվածի հիմնական իմաստը արտահայտող հարցը, որը պահանտում է այո կամ ոչ պատասխանը: Ճիշտ պատասխանելու դեպքում սովորողին հնարավորություն է տրվում անցնել ուսումնական հաջորդ քայլին:

Ծրագրավորված ուսուցման տեխնոլոգիայի կիրառման ներկայացված ուսումնական նյութը ապահովում է ամեն աշակերտի ամբողջ նյութի բոլոր հատվախների յուրացում և նկատի է առնում բոլոր սովորողների ուսման առանձնահատկություններն ու ուսման տեմպերը:

Այս տեխնոլոգիան իհարկե չի կարող չկիրառվել կրթության հատուկ կարիք ունեցող երեխաների կրթական կարիքների ուսումնասիրելիս: Ծրագրային ուսուցման տեխնոլոգիան միջոց է, որով ուսուցիչը իր ուսուցանվող նյութը կարող է հասցնել դասարանի բոլոր աշակերտներին՝ անկախ նրանց կարողությունների, ընդունակությունների մակարդակից: Այստեղ ակնհայտ է ուսուցման անհատական մոտեցման սկզբունքը: Աշակերտները ուսուցանվող նյութը յուրացնում են աստիճանաբար, և եթե որևէ «քայլի» վրա դժվարանում են, ապա չեն անցնում հաջորդ քայլին այնքան ժամանակ մինչև չեն յուրացնի նախորդը:

Այս տեխնոլոգիայի կիրառումը «Մայրենիի» ուսումնական գործընթացում ենթադրում է հետևյալառավելությունները.

- Աշակերտները աշխատում են իրենց հարմար տեմպով՝ մեկն արագ, մյուսը ավելի դանդաղ:
- Ապահովում է մշտական հետադարձ կապ ուսուցչի հետ՝ հասկացավ-չհասկացավ այս հատվածը, գիտի, թե չգիտի այն:
- Սովորողը չի ունենում բացթողումներ իր գիտելիքների մեջ:

Ինչպես իրավացիորեն նշվում է, ուսուցիչը պետք է հետամուտ լինի, որ ուսումնառության տարիներին սովորողների ձեռ բերած գիտելիքները լինեն միջոց՝ համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորման ու զարգացման համար, որպեսզի արդյունքում ունենանք համագործակցող, տրամաբանող, առողջ բանավեճի պատրաստ, իր մտքերն ազատ արտահայտող, սեփական կարծիքն ունեցող, ստեղծագործող, ինքնուրույն գործունեություն ծավալող անձ-քաղաքացի՝ ունակ՝ ինքնակամզակերպվելու և պատասխանատու՝ իր կատարած արարքների համար: Այստեղից եզրակացնում ենք, որ

սովորողին անհրաժեշտ են ոչ միայն խորը և կայուն գիտելիքներ, այլև կրթական համապատասխան և կարողություններ, սոցիալ-անձնային անհրաժեշտ որակներ՝ կյանքում իրենց ավելի ճիշտ դրսևորելու և հասարակությանը հեշտ ինտեգրվելու տեսանկյուններից:

Դասագիրքն աշակերտների համար հի,նական ուսուցման միջոցն է, ուստի ուսուցման գործընթացում պետք է օգտագործվի վերջինիս բոլոր հնարավորությունները և մեթոդական լիարժեքությունը:

Սովորողների կրթական կարիքները ուսումնասիրելիս պետք է հաշվի առնել նշված մեթոդական առանձնահատկությունները.

1.Կարևոր է հիշել. աշակերտներից յուրաքանչյուրն աշխատում է սեփական տեքստի վրա:

2.Ոչ մի այլ դաս այնքան կողմնորոշված չէ դեպի աշակետի անհատականությունը, որքան խոսքի զարգացման դասերը:

3.Չպետք է մոռանալ նաև խոսքի զարգացմանը միտված աշխատանքի այնպիսի կարևոր բաղադրիչը, ինչպիսին է խոսքի նմուշի առկայությունը:

4.Խոսքի զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանը շատ ժամանակ է զբաղեցնում և ուսուցչից պահանջում է դասի յուրաքանչյուր հատվածի համար նախատեսված խնդիրների բծախնդիր իրականացում:

Աշակերտների անհատական կարիքների ուսումնասիրման մեթոդների շարքում առանձնահատուկ տեղ ունեն նաև առաջադրանքները, ուսումնական թղթապանակի ստեղծումը և այլն: Դիտարկենք Թղթապանակ ստեղծելու գործընթացի քայլերը «Մայրենի լեզու 3» դասընթացի շրջանակներում, թեմատիկան՝ «Ժողովուրդն իմաստուն է»:

Թղթապանակը սովորողների ձեռքբերումների գնահատման և վերահսկման նոր ձև է: Հիմնական իմաստն է՝ ցույց տալ այն ամենը, ինչ ընդունակ է սովորողը: Այսինքն՝ սա լավագույնս կարող է դրսևորել սովորողի գիտելիքները: Ընդհանուր առամբ ուսումնական թղթապանակը սովորողի ուսումնական գործունեության արդյունքների և նմուշների կազմակերպման, ինչպես նաև արտաքին աղբյուրների համապատասխան տեղեկատվական նյութերի հավաքածու է: Այն նախատեսված է սովորողի ուսումնական մակարդակի բազմակողմանի քանակական և որակական վերլուծության և նրա ուսումնական գործընթացի հետագա շտկման համար:

Դիտարկենք թղթապանակի ստեղծման գործընթացի քայլերը վերոնշյալ թեմատիկայի ուսուցման շրջանակներում.

1. Աշակերտը պետք է գաղափար ունենա ժողովրդական բանահյուսության ժանրերի մասին: Այդ նպատակով ուսուցիչը նրանց պետք է հանձնարարի կարդալ նշված թեմատիկայի շրջանակներում ընդգրկված հեքիաթը, առակը:
2. Ժանրի մասին առավել լավ պատկերացում կազմելու համար հանձնարարել ընտրել որևէ առակ կամ հեքիաթ, առանձնացնել ստեղծագործության գաղափարական հիմքը, դրական ու բացասական կերպարներին:
3. Ստեղծագործությունների ժանրային, բովանդակային առանձնահատկությունների ընկալումից հետո թղթապանակում պետք է տեղ գտնեն նաև բառապաշարի վերաբերյալ հանձնարարությունները: Նշված թեմատիկայի շրջանակներումմ ուսուցանվում են հատկանիշ ցույց տվող բառերը: Աշակերտները պետք է ստանան հանձնարարություններ՝ ստեղծագորությա համապատասխան հատվածից դուրս բերել հատկանիշ ցույց տվող բառերը՝ բացատրելով դրանց իմաստը, գրելով հոմանիշ այլ բառ:

4. Հատկանիշ ցույց տվող բառերը հստակորեն տարբերակելու համար ուսուցիչը թղթապանակի հաջորդ քայլում կարող է առանձնացնել այնպիսի հանձնարարություն՝ գրել առարկա, գործողություն և հատկանիշ ցույց տվող 10-ական բառեր:
5. Հաջորդ քայլում աշակերտներին գաղափար տալ պատկերավորմման միջոցների, մասնավորապես այլաբանության, փոխաբերությանն, չափազանցության մասին՝ բերելով համապատասխան օրինակներ: Հանձնարարել թղթապանակում արտագրել որևէ առաջ՝ ընդգծելով պատկերավորման միջոցները:
6. Գիտելիքների ամրապնման համար թղթապանակի վերջին քայլում կարելի է ներառել մի շարք վարժություններ, ինչպես օրինակ՝

ա)Նշի՛ր այն բառերը, որոնք առարկայի հատկանիշ են ցույց տալիս:

| | |
|---|---|
| անխելք | սեղան |
| համեստ | միամիտ |
| խելացի | խելք |
| մեծ | անսահման |
| լավություն | փայլուն |

բ)Համապատասխան այունակներում, ըստ պահանջի, գրել ածականներ

| Ձայնավորով սկսվող ածականներ | Բաղաձայնով սկսվող ածականներ |
|---|---|
| | |

գ)Գույնը կամ գունանունը միացնել առարկա ցույց տվող համապատասխան բառին՝ ըստ տրված պատկերների.

կարմիր, սպիտակ, կանաչ, դեղին
ելակ, վերնաշապիկ, տերև, մատիտ, խնձոր, վարդ

Նշված վարժությունների շարքը կարելի է շարունակել՝ թղթապանակում ընդգրկելով նաև որևէ ստեղծագործության կերպարների բնորոշման վերաբերյալ հանձնարարություններ:

Այսպիսով՝ ուսումնական թղթապանակը սովորողների անհատական կարիքների գնահատման, ուսումնասիրման միջոց է, որը նպաստում է սովորողների, ուսուցիչների համագործակցությանը, հնարավորություն է ընձեռում գնահատելու ուսման ընթացքում ներդրված ջանքերը, ձեռքբերումներն ու առաջընթացը:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական տեխնոլոգիաների և մեթոդների կիրառումը «Մայրենիի» դասընթացում հետապնդում է կարևոր նպատակ՝ նախանշել արդյունավետ դասավանդման տարբերակ: Կրթական գործընթացի արդյունավետությունը կախված է նրանից, թե ուսուցիչն ինչքանով է ունակ ուսումնասիրելու սովորողի անհատական ուսումնական կարիքները և ուսումնական գործընթացում ճիշտ ու հետաքրքիր մեթոդներ կիրառելու:

Աշակերտակենտրոն մոտեցումները, մասնավորապես համագործակցածային, ծրագրային մեթոդների կիրառումը «Մայրենիի» դասընթացում հայտորոշիչ նշանակություն է ստանում սովորողի իմացության վերաբերյալ գաղափար կազմելու: Դրանից հետո ուսուցիչը կարող է աշխատել և վերացնել սովորողների մոտ նկատվող առանձին թերություններ: Կոլեկտիվ, համագործակցային մեթոդների կիրառման պարագայում ուսուցիչը հնարավորություն է ստանում առանձին սովորողի կրթական կարիքները ձևավորելու՝ ուշադրություն դարձնելով սովորողների արժանիքերին ու թերացումներին: Այսինքն՝ սովորողների անհատական կարիքները ձևավորում են ուսումնական գործընթացում կիրառվող մեթոդների օգնությամբ:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Գյուրջինյան Դ., Մայրենի 3, Երևան 2008:
2.Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006:
3.Միքայելյան Օ., Միքայելյան Ս., Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան, Երևան, 2010:
4.Մոդուլ հերթական ատեստավորման ենթակա տարրական դասարանների ուսուցիչների մասնագիտական զարգացման վերապատրաստման դասընթացներ, Երևան 2017: